Ա. ՏԱՐԻ —.(16/29 ՄԵՍՍ. 1903. — ՌՈՒՍՉՈՒՔ).— Թիւ 14

ՎԵՐԱԾՆՈՒԹԻՒՆ

Հասցէ՝
Rédaction du journal
„VERADZNOUTIOUN"
ROUSTCHOUK (Bulgarie)

ԳԱԲԱԹԹԵՐԹ
ԱՄԷՆ ԵՐԿՐԻ ՀԱՄԱՐ
Տարեկան՝ 10 Ֆրանկ, վեցամսեայ՝ 5 Ֆրանկ։

Հասցէ՝
Редакция на вѣстникъ
„ВЕРАДЗНУТЮНЪ"
РУСЕ

ՍՈՑԻԱԼԻՍՏԱԿԱՆ ԱՇԽԱՏՈՒԹԻՒՆԸ *)

II.

Եզրակացութիւնը, որ ըստ ինքեան բղխում է մեր ասածներից նախորդ յօդուածում, հետևեալն է. — Սոցիալիստական գործունէութիւնը, այսինքն բանւոր դասակարգի սոցիալական կռիւը պէտք է ուղղւէ առաջնապէս բուռնակալական ամբողջ կարգերի դէմ, անմիջական նպատակ ունենալով դրանց տապալել և հաստատել տեղը ընդարձակ ռամկավարական սահմանադրութիւն։ Հետևաբար, այդ կռիւը քաղաքական լռի է բառիս ամենալայն նշանակութեամբ։ Բայց բանւոր դասակարդը չէ կարող աջողապէս մղել այդ մեծ կռիւը՝ առանց կազմակերպուելու իբրև դասակարգային մի կազմակերպութիւն և առանց ներկայանալու իբրև սոցիալիստական քաղաքական մի կուսակցութիւն։ Գործել խմբային ոյժերով և բացարձակապէս տնտեսական հողի վրայ, այսինքն այնպիսի գործադուլներով, որոնք չեն դնում քաղաքական պահանջներ և կամ չեն գործադրում այն տեսակ գործողութիւն (acte), որն ունենայ քաղաքական նշանակութիւն, — ո՛չ միայն աննպատակայարմար գործունէութիւն է, այլև անհամապատասխան է բանւոր դասակարգի պատմական դերին ու գործին։ Ահա հէնց այդտեղ է, որ երևան է գալիս մի հիմնական պահանջ, որի գործադրողը պէտք է լինի որպէս բանւոր դասակարգի գիտակցական մասը, որ մեզանում մի շատ չնչին փոքրամասնութիւն է առայժմ, նոյնպէս և հայ սոցիալ-դէմոկրատները։ Բանւոր դասակարգի քաղաքական ինքնագիտակցութեան ծաւալումն ու զարգացումն այսօր սոցիալիստական գործունէութեան ամենագլխաւոր պայմանն է մեզանում։ Սոցիալիստական սկզբունքների ու պահանջների պրոպագանդա, քաղաքական agitation և կազմակերպութիւն սոցիալիստական ոյժերի — դա՛ է այն սոցիալիստական աշխատութիւնը, որ անհրաժեշտաբար պէտք ունի իր գործադրութեան մեզանում։

Այն քաղաքական յեղափոխութիւնը, որ կոչուած է անելու սոցիալիստական կուսակցութիւնը, չէ կարող լինել արդիւնք խմբային գործունէութեան։ Նա իր էութեամբ արդէն պահանջում է բանւոր դասակարգի հանրային, մասսային գործողութիւնը։ Բայց որպէսզի այդ դասակարգը կարողանայ կատարել իր այդ պատմական դերը, նա պէտք է նախ ունենայ այդ դերի գիտակցութիւնը և ապա, դրա հետ զուգընթացաբար, պէտք է որոշ, մէկ և ընդհանուր կազմակերպութեան մէջ ամփոփէ ու կարգաւորէ իր սոցիալիստական ոյժերը։ Զեռք բերել այդ գիտակցութիւնը և դրա շնորհով ձգտել կազմակերպել սոցիալիստական ոյժերը՝ նշանակում է կրթուել ու հասունանալ քաղաքականապէս։ Եւ հէնց այդ է, որ պէտք է լինի այսօր հայ սոցիալ-դէմոկրատների առաջին պարտականութիւնը հայ բանւոր դասակարգի վերաբերութեամբ, որն ամեն տեսակէտից հիմնովին կարօտ է իր դերի քաղաքական իմաստի հասկացողութեան։

Բանւորական շարժումները Կովկասի զանազան քաղաքներում արմատական նշանակութիւն ունեն մի քանի տեսակէտից։ Նը՛ր ան՛ք առաջնակարդ տեղ բռնեցին ամբողջ Ռուսաստանի քաղաքական կեանքում իբրև մի հրամայական երևոյթ, որ իր ամբողջ ոյժերով հանդիսանում է հակակառավարական ռուսական դէսպոտիզմի նկատմամբ։ Նրանք ընդունեցին գեռ մինչ այժմ Ռուսաստանում չը տեսնուած ահագին ծաւալ գործաթողների ստուար քանակութեան շնորհով, ըստ որում միայն Բագուում նրանց թիւն անցնում էր քառասուն հազարը։ Նրանք ստացան, իբրև բանւոր դասակարդի կռիւի յայտնի ձև, քաղաքացիական իրաւունք Ռուսաստանի պէս մի երկրում, ուր հասարակական ամեն, թէ՛ խմբային և թէ՛ անհատական, հակակառավարական երևոյթ օրէնքով նկատւում է իբրև ապրստամբ ըմբոստութիւն և հետևապէս խստօրէն արգելուած է։ Նը՛ր ան՛ք, նոյն իսկ բանւոր դասակարդի դրութեան շնորհով կապիտալական բէժիմի տակ, ինքնաբերաբար բղխեցան իրանց ապրիւրից իբրև մի զօրաւոր հոսանք, որ հեղեղի ուժգնութեամբ կռւում է կապիտալի դէմ, ձգտելով աւելի և աւելի ստորադրել Ռուսաստանի բանւոր դասակարդի կամքին կապիտալիզմի անյագ շահագործութեան քմահաճոյքները և այդպիսով աւելի և աւելի բարձրել աշխատաւորի վիճակը։ Նրանք, վերջապէս, հէնց իրանց ծագումից սկսած իրագործեցին այն մեծ կոչը, որ իր մէջ կրում է սոցիալիզմի ամբողջ միջազգային իմաստը, այսինքն՝ «պրոլետարիներ՝ ամեն երկրի, միացէ՛ք» նշանաբանը։ Ռուս, գերմանացի, վրացի, պարսիկ, հայ, ամեն տեղական ազգերի բանւորները դիմում են գործադուլների միացած ոյժերով, որով և ապացուցանում են, որ առանց ազգի խտրութեան՝ այդ ժողովրդների բանւոր դասակարդերն իրանց ճանաչում են իբրև մէկ և ընդհանուր դասակարդ, մի և նոյն շահերով, որպէս և կանգնած մի տէրութեան ոտքի տակ, որ ճնշում է նրանց ամենքին ու միևնոյն կապիտալի առաջ, որ շահագործում է նրանց ամենքին, և, ուրեմն, այդ երկու ահաւոր թշնամիների դէմ նրանց գործածելիք հասարակական զէնքերն էլ միևնոյն են, ընդհանուր են։

Դրանք են ահա կռւի այն ձևերը, այն ուղղութիւնը և այն միտքը, որ այս ամառուայ ընթացքում գործադրեցին ամեն ժողովրդների բանւորները Կովկասում, իբրև մէկ ամբողջ բանւոր դասակարդ։ Այդ մեծ երևոյթը, որ սկսելով՝ այսուհետև աւելի և աւելի, հակառակ ամեն խոչընդոտների, ամեն պատեհ առիթին կրկնուելու է և ընդհանրանալու, յղի է մեծամեծ հետևանքներով ապագայում։ Այդ հետևանքները կը լինեն փճռական ռուսական բռնակալութեան անկման վերաբերութեամբ այն օրը, երբ նոյնօրինակ կռիւ կարողանան մղել նաև Ռուսաստանի կենտրոնական նահանգների բանւորները։ Հանրային, մասսային քաղաքական կռիւի շրջանը սկսել է արդէն Ռուսաստանում և ժամանակի ընթացքում, բնականաբար, նա ըստանալու է դրական նշանակութիւն և վճռական ազդեցութիւն Ռուսաստանի ներկայ քաղաքական կարգերի յեղափոխման վերաբերութեամբ։

Բայց հէնց ա՛յս վերջին քաղաքական դերի համար է, որ զգալի կերպով անպատրաստ է տակաւին բանւոր դասակարդը Ռուսաստանում։ Եւ որովհետև մեր խօսքը Կովկասի մասին է, պէտք է ասենք բացարձակապէս մեր տպաւորութիւնը, որ իրանց շարժումներում այնտեղ բանւոր դասակարդն արդարև յայտնուեց աբհաս իր հասկացողութեամբ իրա քաղաքական պատմական դերի մասին։ Պրոլէտարիատի կռիւը, հէնց այն պատճառով՝ որ էապէս անտեսական կռիւ է, նա՛և քաղաքական է, և պէտք է, ուրեմն, ամեն յարմար առիթին, երբ նա բացարձակ ըմբոստութեան մէջ է կապիտալի դէմ, գործադրէ այն բոլոր քաղաքական զէնքերը ևս, որ կարող է և ընդունակ է առնելու իւր ձեռքն իբրև կռւի գլխաւոր միջոց։ Դնել բանւոր դասակարդին կռւի այդ քաղաքական ուղիի վրայ—ահա՛ ամենագլխաւոր պայմանը ներկայումս սոցիալիստական գործի աջողութեան և պրոլէտարիատի պատմական անմիջական ձգտումների իրագործման։ Մեր երկու յօդուածներում մենք աշխատեցինք գծագրել այն աշխատութիւնը, որ առաջնապէս հէնց ա՛յդ նպատակի համար պէտք է կատարեն հայ սոցիալ-դէմոկրատները հայ բանւորների մէջ Կովկասում։

* * *

Յ. Գ. Ստացանք մի բրոշիւր, որ հրատարակած է Պարիզ, «Վայրկեանը» վերնագրով։ Դրա իմաստուն գրողը միայն «հանդուգն ոտի շօշափած է» «Վերածնութեան» մէջ զետեղած յօդուածները սոցիալիզմի մասին, ա՛յնպիսի հարցերի մասին, որ ինքը գտնում է «շատ բարդ, բայց եւ շատ կենսական հարցեր»։ Եւ, ի հարկէ, իր այդ «հանդուգն ոտի» շօշափման մէջ «շատ բարդ եւ շատ կենսական հարցերի» մասին նա ցոյց է տալիս..... գլխաւորապէս իր սիրը Հնչակեանների դէմ, որպէս եւ ապաւաղում է մեր մտքերը՝ մի կողմից, իսկ միւս կողմից իր... տգիտութիւնը «շատ բարդ եւ շատ կենսական հարցերի» մասին։

*) Տես «Վերածնութիւն» No 11

Նա խոստանում է սակայն ապագային «մանրամասն ուսումնասիրութիւն մը նուիրել» այդ հարցերին։ Մեր իմաստունը լաւ կանէր, եթէ հէնց դրանից սկսէր առանց անհարկի փութկոտութեան։ Ցամենայն դէպս Կովկասի եւ ռուսահայերի նկատմամբ նա բարեհաճում է «նախակրող ըլլալիք չաs հեռու» լինել (համեցէ՛ք, ընթերցող), ինչպէս նա եւ «ընկերվարական վարդապետութեան»(!)մասին, որ պարոնը «բնական» է գտնում ռուսահայերի մէջ։ Շատ շնորհակալ ենք, որ մեր իմաստուն քննադատը «համառօտակի» կերպով համաձայն է մեզ հետ այդ կէտում։ Բայց նա անիմաստուն աճապարանք է ցոյց տուել եւ առհասարակ անիմաստուն է յայտնում, չսպասելով եւ չուզենալով ըմբռնել «իմաստակների» կարծիքը Թիւրքահայ դատի ներկայ դրութեան եւ Թիւրքահայ գործունէութեան մասին։ Իմաստունին ուղղում ենք այդ առիթով դէպի մեր յօդուածը «Թիւրքահայ դատը» վերնագրով, «Վերածնութեան» No 9-ի մէջ, ուր կը գտնէ մեր պատասխանն իր ապագայ «ուսումնասիրական» գրուածքին, որի երեւան գալուն այնուհետեւ պէտք էլ չի լինել։ Կաւելացնենք այստեղ միայն այնչափ, որ մեր իմաստունը ճըգնում է ռուսահայերից զատել Թիւրքահայերի գործունէութիւնը, եւ այդ ջանքերի տակ նկատւում են ականջներն այն սխմար ու ազգամոլ հարցի, որ մէջ են գլորել «տեսնելու համար աչք ունեցողները», այսինքն մեր իմաստունի պէս եղբայրասպանութեան տխուր հերոսները։

ՆՈՐ ԳՈՐԾՈՒՆԷՈՒԹԵԱՆ ԱՌԹԻՒ

I.

(Շարունակութիւն)

Կայ եւ մի այլ հանգամանք, որ նոյնպէս շատ լաւ ըմբռնելու է. այդ այն է, որ մարդիկ շատ աւելի դիւրութիւններ ունին իրենց բնակած վայրում մասնակցել յեղափոխական շարժումներին, քան թէ նախամտածուած որոշմամբ գնալ ուրիշ վայրում մասնակցելու։ Օրինակի համար՝ Բագուի կամ Թիֆլիսի հայ բանւորը կամ ինտելիգենտը շատ անգամ, մի առանձին գիտակցութեան չհասած լինելով հանդերձ, րոպէի կամ դէպքի ազդեցութեան տակ, չափազանց եռանդուն յեղափոխական է դառնում։ Մինչդեռ նոյն անձնաւորութեանը հազարաւոր գայլի աւետարանով դուք չէիք կարող համոզել իր գործը, տունը, ընտանիքը թողնել եւ Հայաստան գնալ կռուելու։ Միթէ չգիտե՞նք, որ ամենաեռանդուն ու գաղափարական երիտասարդներն անգամ դժուարանում են Կովկասից Հայաստան գնալու, որովհետեւ այդ երկրի աշխարհագրական դիրքը, լեզուն, սովորութիւնները, երկրի օրէնքները եւ այլն միանգամայն անծանօթ են նրանց։ Եթէ գնացողներ էլ եղել են կամ լինում են, նրանք այնչափ օգտակար չեն կարողացել լինել, որչափ պէտք է որ լինէին։ Այն ինչ նոյն անձնաւորութիւնները իրենց միջավայրում թէ՛ աւելի դիւրութիւն ունեն գործելու եւ թէ՛ շատ աւելի օգտակար կարող են լինել։ Եւ այսպէս, երբ երկրի դրութիւնը բնականաբար եւ ինքնըստինքեան Կովկասի հայերին մի կողմից յետ է կանգնեցնում Տաճկահայաստանի յեղափոխական շարժումներում ակտիւ եւ բուռն գործունէութիւն ունենալուց, իսկ միւս կողմից նրանց մղում է եւ ահագին դիւրութիւններ է տալիս Ռուսաց յեղափոխական շարժումներին ակտիւ կերպով մասնակցելու, մենք դարձեալ հարցնում ենք. կարելի՞ է եւ յիմարութիւն ու յանցանք չէ՞ անգամ Կովկասի Հայերին ասել՝ մի՛ մասնակցէք այդ յեղափոխական շարժումներին, այլ ձեր ուժերը պահեցէք Տաճկահայաստանի շարժումների համար։

Հնչակեանների կամ սրա ու նրա ասելով չէ՛, որ Կովկասի Հայերը կը մասնակցեն հակացարական շարժումներում, այլ իրերի բնական ընթացքն է, որ նրանց հետզհետէ պիտի մղէ այդ շարժման մէջ։ Եւ քանի որ այդպէս է, քանի որ պառաւական քարոզներով չէ՛, որ յեղափոխական շարժումներ են սկսւում կամ կանգնեցւում, ուրեմն իսկական եւ գիտակցական յեղափոխականի կոչումը պէտք է լինի առաջ անցնել եւ իր աչալուրջ ղեկավարութեամբ ուղղութիւն տալ այդ շարժումներին, որպէսզի յեղափոխականապէս տրամադրուած ուժերը գործիք չդառնան այնպիսի առաջնորդների ձեռքում, որոնք կարող են այդ շարժումները Հայերի համար ոչ նպաստաւոր ճանապարհի մէջ դնել։

Միանգամայն աւելորդ է այն վախը, թէ Կովկասի շարժումները կարող են հայ յեղափոխական ուժերը ջլատել։ Ընդհակառակը՝ մենք բոլորովին հակառակ կարծիքի ենք։ Ահա թէ ինչպէս. վերեւում բացատրած շատ բնական պատճառներով, մինչեւ օրս Կովկասը շատ չնչին տոկոս ուժեր է տուել Հայկական յեղափոխութեանը։ Եւ այդ չնչին—մօտաւորապէս 5%-ը նա դարձեալ միշտ կարող է տալ. իսկ մնացեալ 95%-ը բացի մի քանի դրոշներ տալուց, ոչ մի գրական կամ ակտիւ դեր չէ կատարել։ Այն ինչ՝ հէնց այդ 95%-ն է, որ պիտի գլխաւորաբար մասնակցի Կովկասի շարժումներին։ Եւ դրանք իրենց երկրում յեղափոխական բովից անցնելով, զանազան փորձանքների ընտելանալով, այլեւս չեն դժուարանայ եւ Տաճկաստան գնալու։ Հետեւապէս յեղափոխական ուժերը ոչ միայն չեն ջլատուի, այլ ընդհակառակը աւելի կաճեն ու կը բազմանան, որի շնորհիւ կը զօրեղանայ եւ Տաճկահայաստանի յեղափոխական գործը։ Չէ՞ որ Կովկասի շարժումները ընդունելով, մենք աչքաթողի չենք անում ու չենք լքում Տաճկահայաստանի շարժումները։ Ընդհակառակը, այդ երկուսը միացնելով աւելի ընդարձակ ասպարէզ ենք բանում հայ յեղափոխականի առաջ։ Այլեւս հայ երիտասարդը չէ կարող կեղծ յեղափոխականի դիմակ դնել երեսին եւ տարիներ շարունակ աջու ձախ կրկնել, թէ ինքը մեծ յեղափոխական է, բայց որովհետեւ առայժմ Տաճկաստան գնալու յարմարութիւններ չունի, իսկ Կովկասում էլ յեղափոխական գործ չը կայ, ուստի ինքը ստիպուած է իր ամբողջ յեղափոխական գործունէութիւնը սահմանափակել տարեկան մի քանի դրոշներ հաւաքելով։

Տաճկաստան գնալու յարմարութիւններ կամ դիւրութիւններ չունեցող անկեղծ հայ յեղափոխականի առաջ գործելու փառաւոր եւ լայն ասպարէզ է բացուել Կովկասում, ուր, ինչպէս եւ ամեն տեղ, բանիմաց եւ հաւատացող առաջնորդների մեծ կարիք կայ։

Թող ուրեմն այդպիսիները առաջ գան առանց մի րոպէ տատանուելու։

Իսկ Տաճկաստան գնացող յեղափոխականներին մենք նոյնպէս տալիս ենք մեր ձեռքը բարի ճանապարհ եւ կատարեալ յաջողութիւն ցանկանալով նրանց։

Միւս անգամ մենք կը քըննենք այն առարկութիւնը, որ ենթադրւում են, թէ Կովկասի յեղափոխական շարժումները կարող են Տաճկաստանի յեղափոխական գործը զրկել դրամական նպաստներից։

Թիֆլիս

Թորոս

«ԲԱԶՄԱՎԷՊ»-Ը ԽՐԱԽԱԲԱՆԻ ԴԵՐՈՒՄ

(շարունակութիւն եւ վերջ)

Բայց տեսէք «փրկութեան» համար ինչ միջոց է առաջարկում «Բազմավէպը» ամեն անգամ իր արհեստի զէնքով թող աշխատէ հայ կեանքի փրկութեան։ Կօշկակարը իր հմուտ կօշկակարութեամբ, ինժէնէր—տեխնօլօգը իր տաղանդաւոր կատարելագործումներով արդիւնաբերական գործիքների, կրթուած վաճառականը իւր սրամիտ սպեկուլացիայով, ժամկոչը իւր հմուտ զանգակահա-

---

ԲԱՆԱՍԻՐԱԿԱՆ 13

ԱՆԻՇԽԱՆՈՒԹԻՒՆԸ

ՌԵԿԼԻՒ-ի

թարգմանեց Ֆրանսերէնէ

Ա. Տ-եան

ԱՌԱՋՆՈՐԴՆԵՐԸ

Առաջնորդները կրնան գէշ կամ աղէկ ըլլալ. բայց առանց անոնց, ընդհանուր յարձակում մըղուած վայրկենին՝ անկարելի է։ Ուստի, անհրաժեշտ է բանւորներու գործունէութեան միութիւնը հակադրել մեր թշնամիներու սեղմ շարքերուն, որովհետեւ ցրուած ուժերը եւ անկանոն յարձակում մը ապահովապէս դէպի պարտութիւն կառաջնորդեն։ Կռուի միջոցին ամեն տեսակ անհամաձայնութիւն պէտք է անհետանայ. ցեղական կամ խմբական հարցերը պէտք չէ բաժնեն մեզ ։ Պէտք է ամբողջութիւն մը կազմենք քաբիթալիզմի դէմ։

Բանակի մը զօրութիւնը կը կայանայ անոր հաստատ եւ անպարտելի միութեան մէջ։ Մենք թշնամիներու փոքրիկ քարեր չպիտի նետենք, այլ ժայռ մը, որովհետեւ խնդիրը անիկա զայրացնելու կամ չարչարելու մէջ չի կայանար, այլ անոր դէմ մահացու եւ անխնայ կռիւ մը մղելու մէջ։

Կարգապահութեան եւ ղեկավարութեան պակասն էր որ պատճառ եղաւ պարտութեան Սպարթաքիւսին եւ իր քաջարի գերիներուն, 16-րդ դարու գիւղացիներուն, անիշխանականներուն՝ Սպանիոյ մէջ (1875), Իտալիոյ մէջ (1883) եւ Փարիզ քաղաքին՝ 1848-ին ու 1871-ին։ *)

«Ուր որ պայքար կայ, կեդրոնացում պէտք է. պատերազմի միջոցին բռնակալութիւնը անհրաժեշտ է»։ (Bagehot).

«Անկարող զօրապետի մը հրամանատարութեան տակ գտնուող բանակներ յաղթած են, բայց իրենց գլուխը ատենապաններու ակումբ մը ունեցողները՝ երբեք։ Եթէ կռուի օրերուն զօրաբանակներու հրամանատարութիւն ունեցողները հարկ եղած հեղինակութիւնը չունին, երբեք յաղթութիւն յուսալու չէ գործողութեան միջոցին»։ (L'Ami du Peuple. 1885).

Վերջին հաշուով, վտանգը աւելի առաջնորդուողներուն քով է, քան թէ առաջնորդներուն։ Յիրաւի, յաղթութիւնը կախում ունի մեծ մասամբ հոգւոյ վեհութենէ, անձնուիրութենէ, վարուիլ եւ գնահատել գիտնալէ, պարկեշտութենէ անոնց, որոնք կոչուած են սօցիալիզմի մարմին մը տալու գեղեցիկ դերին եւ վարելու առաջին օրերու ռազմագիտութիւնը. սակայն ժողովուրդն է որ կը ներշնչէ սկզբունքներ եւ զանոնք յառաջ կը մղէ։ Ուրեմն, թող հաւատք ունենան առաջնորդներուն վրայ, ցոյց տան անոնց իրենց կատարելիք գործը եւ թողուն անոնց գործադրութեան ազատութիւնը մինչեւ պայքարին վախճանը։

Երբոր կռիւը լըջօրէն սկսի, անիշխանականները իրենք իսկ պիտի զղջան որ ժամանակին չեն խորհած կազմակերպուելու ապագայ պայքարի համար. մանաւանդ որ քարոզելով շարունակ զգուշաւորութիւն դէպի այն բոլորը, որ ղեկավարութիւն կը կոչուի, վարիչները գործելու անկարելիութեան դատապարտած պիտի ըլլան։

(Շարունակելի)

*) Երբ Վերսայլի բանակները բազմութեամբ կը դիմէին դէպի Փարիզի դուները, քաղաքի անցքերէն մէկը բոլորովին անպաշտպան թողուած կը թուէր։ «31 Մարտ 1871-ին, Փարիզի հասարակութիւնը ողջունող 200000 զինուած քաղաքացիներէն 15000 հոգի չէր մնացած Փարիզի պատնէշներուն վրայ Մայիս 20-ին։ 85000 մնացածներէն 5000-ը միայն զէնքը ձեռքերնին ինկած էին։ Միւսները կը փնտռէին մէկիկ մէկիկ փոքրիկ խումբերով, գնդակահարելու համար»։(L'Ami du Peuple Մաքսիմ, Լիզպօնի թերթը)։

րութեամբ որքե՞ք չեն փրկի իրենց «արհեստի շէնքով» մի ազգի կեանք։ Չենք ուզում բացասել արհեստի նշանակութիւնը ժողովուրդի նիւթական բարեկեցութեան համար, բայց արդեօք արհեստի ծաղկումն ապահովւա՞ծ է հայ ժողովրդի մէջ. առենք թէ կանոնաւոր դրութեան մէջ է, բայց արդեօք դիպլօմաւոր քիմիկոսը իւր «արհեստի շէնքով» պիտի կարողանա՞յ «փրկել» բազմաթիւ քայքայւող ներկարարներին։ Ոչ ոք նոյնպէս չի կարող ուրանալ, որ արհեստաւոր-ուսանողները (ինչպէս հասարակ քաղաքացի արհեստաւորը մի գիւղի համար) կուլտուրտրէգերներ են, «հանրային զարգացումին մշակներ», բայց այդ, այսպէս ասած՝ պրօցէսը կատարւում է բնականօրէն, առանց անհատի կամքի մասնակցութեան։ Յայտնի է հասարակական կեանքում կատարւող ընդօրինակելու (Nachahmen) իրողութիւնը։ Բերլինում աւարտած մի արհեստաւոր-բժիշկ իւր նըրբացած ճաշակին բաւականութիւն տալու համար շա՞տ նորութիւններ է մտցնում իւր կենցաղավարութեան մէջ, որ ընդօրինակում են հարեւանները, սրանցից միւսները եւն. մի՞թէ դրա համար պիտի երկինք բարձրացնենք այդ բժշկին, որ նա «հանրային զարգացումին մշակ»է։ Բացարձակապէս միեւնոյն է մեզ համար, թէ ո՛վ է այդ միջոցով կուլտուրա մտցնում հայ կեանքի մէջ՝ մի հայ, թէ մի հրեայ, իսկ հայ ուսանողի գիտակցած նպատակը պէտք է լինի՝ ծառայել ճնշուածների շահին, արթնացնել հայ մշակի եւ հայ բանւորի գիտակցութիւնը, հասկացնել նրանց իրենց ճնշուած դրութեան պատճառները, սովորեցնել նրանց իրենց ճնշողների դէմ կռուելու միջոցը...։

Բազմավէպի իւրաքանչիւր նախադասութեան վրայ կարելի է երկար կանգ առնել, և արժէր էլ, ափսո՛ս միայն, որ թերթի էջերը թոյլ չեն տալիս։ Բայց անհրաժեշտ է առանձնակի ծանրանալ մի ուրիշ ծաղիկ-նախադասութեան վրայ, որն ընդգծել էինք վերը, բառերի տակ մըրաքեր կարդացող ընթերցողի ուշադրութիւնը գրաւելու համար։ Ասում եմ՝ անհրաժեշտ է, որովհետեւ դա մի բնորոշող կուրիօզ է Բազմավէպի հասկացողութեան մէջ։ Խօսքս «ազգային մամուլի» մասին է։ Մեր յօդուածում ասել էինք, թէ մեր ուսանողութիւնը տենդային հետաքրքրութեամբ է վերաբերւում լեգալ մամուլի հրապարակական բոշաբանութիւններին, հրճւում է Մշակ—Նոր-Դարի հասարական—ազգային հնամաշ գաղափարներով, այնինչ յեղափոխական մամուլից խոյս է տալիս իբրեւ ժանտախտից եւլն։ Դրանից Բազմավէպը ինքնայատուկ եզրակացութիւն է հանում, թէ մենք ծաղրում ենք այն ուսանողներին, «որոնք ազգային մամուլով կը հետաքրքրուէին»...։ Տեսնու՞մ ես, ընթերցող, ինչ հասկացողութիւն ունի «գիտնական» Բազմավէպը «ազգային մամուլի» մասին։ Նրա աչքին միմիայն լեգալ մամուլն է «ազգային», իսկ յեղափ. մամուլն, թէեւ հայկական տառերով գրուած, «ոչ—ազգային» է. միմիայն լեգալ մամուլն է ծառայում հայ հասարակութեան «փրկութեան», իսկ յեղափոխական մամուլը, ընդհակառակը, նրա թշնամին է և դէպի կործան տանողը... չե՞ս ժպտում, ընթերցող։ Այո՛, մենք հեգնում և ծաղրում ենք այն ուսանողներին, որոնք ձեր ըմբռնողութիւնն ունեն «ազգային մամուլի» մասին, որոնց համար «ազգային»է միմիայն տօլման և հայի չուխան, որոնց համար «հասարակական-ազգային-գրական» գործը սկսում և վերջանում է «հայկական բուրժուական երեկոյթներ» կազմակերպելով, հայի կապիտալով արդիւնաբերած լոբու գովաբանութեամբ։ Հէնց այդպիսի ուսանողների դէմ ենք կռւում, նրանց տափակ հասկացողութիւնը մտրակում. դրա՛նք են, որ ձեզնից դաս առնելով, իրենց «ազգային սիւներ» են անւանում, ի՞նչ գործ ունենք այն ուսանողների հետ, որոնք համեստութեամբ ապրում են իրենց նախասահմանների մէջ, այդպիսիների վրա, թող գանգատի բուրժուա Մշակը և աբեղայ Նոր-Դարը։ Այն ուսանողների կաշկանդւած միտքը պիտի արթնացնել, որոնք լեգալ մամուլով և ուսմունքով են միայն սնւում, որոնց պաշտպանութիւնը դուք էք ստանձնել։ Ձեր այդ պաշտպանութիւնն առանձին ամօթ պիտի բերէ մեր ուսանողութեան, որովհետեւ դա ապացոյց է նրա մտաւոր պառաւութեան, այո՛, ամօ՜թ, բիւր ամօ՜թ մեր ուսանողութեան...։

Գիտենք, ինչ պիտի ասէք մեզ, ծանօթ ենք արդէն ձեր եզրակացութեան հետ. «փողահար պ. Կասեան իր գաղափարովը շուարած է ու շուարեցնող»։ Թողէ՛ք մեր սեփական շւարումը մեր ուսին, իսկ եթէ «շուարեցնող»ենք, կռուեցէ՛ք մեզ հետ, մենք պատրաստ ենք ձեզ հետ մարտնչելու։ Ոչինչ, թող մենք «փողահար» լինենք, բայց մեր «փողը» կռուի, եռուն կեանքի, ազատութեան փող է, իսկ դուք ձեր մեղեդիներով օրօր երգեցէք և մնացրէք առանց այն էլ թմրածներին։ Եթէ հայ ուսանողները իրօք թառամած և պառաւած են մտքով, թող քաղցր ննջեն ձեր մեղմ օրօրի դայլայլների տակ, իսկ եթէ նրանց մըտքի երակները չեն չորացել, բաբախում են կենսալից գաղափարների համար և տենչում կեանքի երիտասարդութեան՝ մեր «փողահարկիցը» կը լինեն։

Ս. Կասեան

ՄԵՐ ՊԱՏԱՍԽԱՆՆԵՐԸ

S. Borätz.— Ստացանք ամբողջը։ Յառաջիկային պիտի հրատարակենք։

Թորոս՝ Թիֆլիս.— Բոլոր գրութիւնները ստացած ենք. շնորհակալութիւն։ Յաջորդաբար պիտի զետեղենք։ Խնդրենք շարունակել։

ՏԳԻՏՈՒԹԵԱՆ ՔԱՂԱՔԱԿԱՆՈՒԹԻՒՆԸ *)

II.

Ընթերցողը կը յիշէ թէ անցեալ անգամ խոստացանք խօսելու «Նարժումի» խմբագիր պ. Վարդոյի յարգելի «թէօրիային» երկրորդ մասին վրայ, անպայման ցանելու համար՝ որ անհիմն ու գիտութենէ զուրկ է այն էմանսիփական credo-ն, զոր յարգոյ «թէօրիթիքը» իր անձնական օրկանին ամսան սիւնակներուն մէջ տարիներէ իվեր տկարամտութեամբ ու գրական անխիղճ ձեւերով կը քարոզէ՝ մնոնթոր համարելով.... միականներուն խեղճ թագաւորութեան մէջ։ Հիմակ պիտի համոզւինք ասոր։ Բայց ինչ որ չենք կրնար լռելեայն անցնիլ՝ այն ալ խորամանկ ու շառլատանական թաքտիկան է — ներողութիւն, քաղաքականութիւն —, որ յատուկ է բոլոր այն «վոլտարժամիտ»... բացերուն, որոնք «մեծ» բախտ ունեցած են թառելու..... մանրապուրժուազական աղբին վրայ՝ առանց խորութեան տեսակէն և ազգութեան։

Շահագիտական ու տէմակօկական այս քաղաքականութիւնը պարզապէս Վարդոյական է. Չը կրնալով բան մը և բացարձակապէս լուրջ բան մը հակադրել (անոր շատ լաւ հասկնալը գիտենք) այն յեղափոխական սոցիալիզմի դէմ, որուն միջոցով կը մեկնենք հայկական իրականութիւնը և որուն սկզբունքները, թաքթիկան ու տեսութիւնները կը պաշտպանենք մենք, — անիկա անմիջօրէն կը փորձէ «ոչ իսկական, իրէղ սոցիալիստներ» անուանելով մեզ... առանց բան մը ըսելու, իմարկէ, «իսկական սոցիալիստներու» մասին։ Ասով պ. Վարդօ կը փափսայ իր ընթերցողներէն թեթեւամիտներուն ականջին թէ՝ «իսկական սոցիալիստներ» ալ կան, որոնց Մեսիան չէ ղրկւած դեռ մեզ...

*) Տես I մասը N-ո 11 եւ 12-ի մէջ։

7

ՌՈՒՍ-ԱՒՍՏՐԻԱԿԱՆ ՔԱՂԱՔԱԿԱՆՈՒԹԻՒՆԸ ՊԱԼՔԱՆԵԱՆ ԹԵՐԱԿՂԶԻԻՆ ՄԷՋ

—o—

Պօսնա եւ Հերցեկօվինան ո՛չ թէ միայն չգոհացուցին Աւստրիան 1877-ին, այլ այս վերջինը ամենաստոր կերպով խաբեց Ռուսիան Պերլինի վեհաժողովին մէջ։ Բայց Ռուսիա շատ լաւ գիտէր իր հակառակորդին հիւանդ կողմերը։ Պարբերաբար խառնակութիւններ ձգել այս կայսրութեան մէջ՝ հոն ապրող սլաւական ժողովուրդներու միջոցաւ, ահա զօրաւոր միջոց մը Ռուսիոյ ձեռքը՝ տկարացնելու համար իր այս թշնամին։ Այս մէկ։ Միւս կողմէն խոստանալ Աւստրիոյ՝ հին Սերպիան եւ Սելանիկը Սպիտակ Ծովուն մէկ մեծ եզերքովը, ահա ինչ որ բաւական էր ստիպելու Աւստրիան որ առաջին յարմար առիթին խաբէ Եւրոպան, քանի որ ան առայժմ ուրիշ աշխարհակալական ձգտումներ չունի Ծայրագոյն Արեւելքի մէջ։ Ռուսիոյ այս գեղեցիկ գաղափարը իրականացաւ 1897-ին՝ իր եւ Աւստրիոյ միջեւ կայացած նշանաւոր գաղտնի դաշնագրով։

Մինչ Ռուսիա եւ Աւստրիա դաշնակցելով եւ իրար խաբելով կը զբաղէին, անդին Գերմանիա խաղաղ բայց անընդհատ կերպով կողոպտէր Եւրոպական Թուրքիան եւ Փոքր Ասիան իր դրամագլուխներով եւ ապրանքներով, ու տակաւ իր ձեռքին մէջ կառնէր Թուրքիան՝ քաղաքականապէս եւ տնտեսապէս։ Այսօր Վիլհելմ Բ.-ը ամենամեծ սիրելին եւ «բարեկամն»է Սուլթանին, գերմանական սպաները՝ են հաւատարիմ ծառաները Փատիշահին, իսկ Գերմանացի բաժնետէրերը՝ ամենէն լաւ ընդունուած հիւրերն են Եւրոպական եւ Ասիական Թուրքիոյ մէջ։ Այս կերպով Գերմանիա, Թուրքիոյ մէջ ահագին դրամագլուխներ ներմուծելէ վերջը, կը ներկայանայ, Ռուսիոյ եւ Աւստրիոյ պէս, ամենէն մոլի պաշտպանը տկար բայց ամբողջական Թուրքիոյ. որպէսզի աւելի լաւ կարենայ ծծել անոր արիւնը։ Ահա թէ ինչո՞ւ համար ան Սուլթանին եւ սոֆթաներուն մոլեռանդութիւնը գերազանցող հաստատակամութեամբ մը կը հակառակի այն բոլոր բարենորոգումներուն, որոնք պալքանեան թերակղզիի Statu quo-ն փոխելու բնութիւնը ունին։

Եւ երբ 1896—97-ին հայկական ապստամբութիւնը պայթեցաւ, Ռուսիա, Աւստրիա եւ Գերմանիա, յանուն խաղաղութեան եւ Statu quo-ի, ընդհանուր հրաման տուին Վոսփորի գահճին արեան մէջ խեղդելու ամբողջ Հայաստանը՝ «այդ աւազակային երկիրը», ինչպէս այն ատեն զայն կանւանէր «Նովօէ Վրէմիա» թերթը։ 150000-է աւելի անբաղդ հայեր ոչընչացան անլուր գազանութեամբ մը Եւրոպայի եւ Ռուսիոյ աչքերուն առջեւ։ Այս վերջինը սատանայական չարակամութեամբ մը կը դիտէր այս սպանդանոցը։ Երբոր Կ. Պոլսոյ Ֆրանսական եւ Անգղիական դեսպանները իրենց ձայնը բարձրացուցին այս գազանութիւններու դէմ եւ պահանջեցին քննութիւն, Ռուսական դեսպանը անոնց յայտարարեց. «Մի հաւատաք, պարոններ, ասոնք աննշան դէպքեր են»։ Երբոր Անգղիական դեսպանը ընդարձակ Ծրագիր մը պատրաստեց ինքնավար Հայաստանի համար, Իշխան Լօպանոֆ ուղղակի ըսաւ անոր որ «Ռուսիա չպիտի համաձայնի եւ թոյլատրէ այդ բանը»։ Ահա այս է պատճառը որ այդ ընդարձակ բարենորոգումները, ամենաանամօթաբար անդամահատուելէ վերջը, միւս բոլորին նման, գացին հանգչելու Ելդըզի անյատակ բարենորոգչական սակառին մէջ։

թարգ: Շահպազ

Շարունակելի

ւոր հայ ազգին, թէ՝ այս «իսկական սոցիալիստները» «պաշտպանելով նացիոնալիզմը»՝ համաձայն չեն, որ «ներկայումս հայ ժողովրդի մէջ աւանդին ուշադրութիւն դարձվի և այլն»։ Ու այս «իսկական սոցիալիստները» միայն պ. Վարդօն կը ճանչնայ (օ՜, ի՜նչ անսահման երջանկութիւն իրեն) և որոնց անունները չուզեր ըսել՝ հաւանականօրէն «համեստութիւնից» շարժուած։

Անտարակոյս ասանկ քաղաքականութիւն յատուկ է միա՛յն տգէտներու. որովհետև անգէտ են անոնք այն վեհ ու հզօր յեղափոխական վարդապետութեան, որուն հոյակապ իտէալը—եղբայրութիւն ու համերաշխութիւն բոլոր ազգերու մէջ—, նուիրագործուած է արիւնով ու արցունքով, և որուն խորանը կըստիպէ՝ որ անոր հետևորդները գործեն ու կռուին համաշխարհային հանրապետութեան համար։ Խեղճ շառլաթաններու և ստոր հոգիներու համար երբէք տեղ չիկա՛յ այս սրբազան իտէալի գրոշին տակ, այ՛ն իտէալին՝ որ կը լեցնէ տառապող բանուորներու, գիտակից բրոլէդարիներու յոգնած կուրծքը, և որուն լուսաճաճանչ փարոսը՝ արդի հասարակաքաղաքական կեանքի լապիրինդոսին մէջ՝ կը լուսաւորէ դաժան ուղին այնքան անկեղծ ու անձնուրաց պայքարողներուն, զորս Պատմութիւնը հաղիւ կը ճանչնայ։ Այո՛, չի ճանչնար, որովհետև... բանուորական շարժման ալիքները կը ցայտեն միշտ դէպ ի վեր և կը փրփրին պատմական վերջին՝ ստրուկ, հասարակական դասակարգի անողոք ընդհարումէն։

Այս պարոնները նեղութիւն չեն կրած կարդալու ու ցեմ կատարացած (ասիկա քաղէկօրիք կերպով կը յայտարարեն «Շարժում» 541 թիւին մէջ) մեր սոցիալիստական գրականութեան գերքոյկներն անդամ. և, իհարկէ, կը «քննադատեն» «ոչ–իսկական սոցիալիստները»՝ առանց պատկառելու իրենց սեփական դատարկամտութենէն։ Օ՜հ, օ՜հ, «քընադատներ, քննադատներ»։ Դուք ալ «կը քննադատէք». ու գիտէ՞ք թէ քննադատութեան առաջին պայմանն է քննադատած նիւթը բազմակողմանի ճանչնալը։ Բայց ի՞նչ պէտք է ձեզի նեղութիւն կրել՝ երբ այսօր կրնաք շատ դաժան շահիլ փառք ու գափնեայ պսակներ «միայն զէնք ու դրամ» պոռալով։ Այս տեսակ գրչակներուն ռուսերը чучело гороховое (պարտէզի խրտուիլակ) կըսեն։

(Շարունակելի)

Թիֆլիս Ա. Յակոբեան

ԿԵԱՆՔԻ ՀԱԿԱՍՈՒԹԻՒՆՆԵՐ

Թիւրք կառավարութիւնը միմիանց յետևից զօրք է ուղարկում Մակեդոնիա ապստամբները ճնշելու համար, իսկ այդ զօրքը բաղցածութիւնից դրդուած շարունակ զէնք ու ռազմամթերք է ծախում նոյն ապստամբներին և այդպիսով աւելի նպաստում ապստամբութեանը։

Ռուս կառավարութիւնը մի ժամանակ ամէն կերպ աշխատում էր ռուս տարրը շատացնել Կովկասում, որպէսզի արագացնի հայերին ու վրացիներին ռուսացնելու գործը, իսկ այժմ ահագին խմբերով ռուս բանուորներին վռնդում է Կովկասից, որպէսզի հայերն ու վրացիները նրանցից չը վարակուեն սոցիալիզմով ու յեղափոխական գաղափարներով։

Նոյն ռուս բռնապետական կառավարութիւնը, որը ոչ միայն սոցիալիզմի, այլև ամենաչնչին ազատամտութեան անհաշտ թշնամի ու հալածողն է, անասելի ուրախութեամբ ողջունեց Գերմանիայում վերջին ընտրութիւններում սոցիալ–դեմոկրատների յաղթանակը, և այդ յաղթանակը նրա համար միայն, որ սոցիալ–դեմոկրատները հակառակ են Ռուսաստանից ներմուծուող ապրանքների մաքսը բարձրացնելուն։

Շնորհիւ այն հանգամանքի, որ Ռուսաստանի գործարանատէրերից շատերը օտարազգիներ են, ռուսաց ամենապահպանողական, բայց և օտարատեաց թերթերը, շատ անգամ բուրժուազիայի շահերի հակառակ բանուորների շահերն են պաշտպանում։

Բաքւի վերջին վիթխարի գործադուլը սկսեց նախկին թունդ յեղափոխական և Դաշնակցութեան հիմնադիրներից մէկի նաֆթային գործարանից։ Եւ գործարանական պ. պ. Կառավարիչներից շատերը, որոնց դէմ էր մասնաւորապէս հայ բանուորների զայրոյթը, մինչև այսօր էլ իրենց, ճնշած հայ ժողովրդի պաշտպան, Դաշնակցականներ են համարում։

Յայտնի է, որ «Շարժումի» Վարդօն իր յեղափոխական կարիերը սկսել է հնչակեանութեամբ և նա 90 թուականին ձ. ռբակալուել ու աքսորուել է իբրև հնչակեան, որ ասել է՝ իբրև սոցիալիստ–յեղափոխական։ Իս. այսօր նոյն Վարդօն մեծ տաղնապի մէջ է հնչակեանութեան վերածնութիւնը տեսնելով ու սոցիալիզմին կատաղի հակառակորդ է հանդիսանում։ Երևի պարոնի կարծիքով «Շարժում» յետ նահանջել է միայն նշանակում։

Նոյնպէս յայտնի է, թէ որպիսի մոլեռանդ հայատեացն է Կովկասի կառավարչապետ Գալիցինը, որը չափազանց մեծ վնը խաղաց հայերի եկեղեցապատկան կալուածները խլելու գործում։ Այժմ այդ նոյն կառավարչապետի խորհուրդի անդամ Սուլթան–Կրիմ Գիրէյը, որը Գալիցինի աջու թևնէ նրա բոլոր գործողութիւնների մէջ, թաշրիզ է գնալու